ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 8 ապրիլի 2001 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի ազգային պաշտպանության նախարար Միրչա Պասկուի գլխավորած պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրերի այցը հայ ժողովրդի 1700-ամյա հոգևոր կենտրոն, իր գոհունակությունը հայտնեց հայ և ռումին եղբայրական ժողովուրդների շարունակվող բարեկամության համար, որի արմատները ձգվում են դեպի դարերի խորքը:

Շուրջ կես տարի առաջ Նորին Սրբությունը, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, իր անդրանիկ այցը կատարեց Ռումին Օրթոդոքս Եկեղեցու պետ Թեոկտիստ Պատրիարքին: Այդ ընթացքում Ռումինիայի նախագահ Էմիլ Կոնստանտինեսկուն Ամենայն Հայոց Հայրապետին հանձնեց Ռումինիայի ազգային բարձրագույն պարգևը՝ «Ռումինիայի աստղ» շքանշանը, ինչը Նորին Սրբությունը նկատեց իբրև ռումինահայ համայնքի նկատմամբ Ռումինիայի իշխանությունների սիրո և գնահատանքի արտահայտություն: Այս տարի, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության օրերին, սպասվում է նաև Թեոկտիստ Պատրիարքի այցը Հայաստան:

Զրույցի ընթացքում կարևորվեց Եկեղեցու համագործակցությունը երկրի պաշտպանությունն ապահովող այնպիսի կարևորագույն կառույցի հետ, ինչպիսին բանակն է: Այս առիթով գոհունակությամբ նշվեց, որ և՛ Ռումինիայի, և՛ Հայաստանի բանակներում իրենց ծառայությունն են մատուցում հոգևոր սպասավորները՝ սերմանելով քրիստոնեական-բարոյական սկզբունքներ և զորացնելով զինծառայողների ազգային-քրիստոնեական ոգին:

Խորապես տպավորված լինելով հայ ժողովրդի դարավոր պատմությամբ և քրիստոնեական ավանդույթներով՝ հյուրերն իրենց հիացմունքն ու հարգանքն արտահայտեցին հայ ժողովրդի պատմության և քրիստոնեական անխախտ ոգու նկատմամբ: